ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն, որը գտնվում է ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3 հասցեում ստորև ներկայացնում է իր կարիքների համար ՀՀ Լոռու մարզի ք. Վանաձորի գյուղատնտեսական պետական քոլեջի մարզադահլիճի վերակառուցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցման նպատակով կազմակերպված ՀՀՔՊԿ-ՊԸԾՁԲ-17/3 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 28.04.2017թ. կնքված ՀՀՔՊԿ-ՊԸԾՁԲ-17/3 պայմանագրում 2020 թվականի հոկտեմբերի 5-ին կատարված փոփոխության վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ	ՀՀ կառավարության 24.09.2020թ. N 1589-Ն որոշում:
Փոփոխության նկարագրություն	2020թ. ընթացքում մատուցման ենթակա ծառայությունների գումարի նվազեցում 909 500 (ինը հարյուր ինը հազար հինգ հարյուր) ՀՀ դրամի չափով:
Փոփոխության հիմնավորում	Պայմանագրի 7.3 կետ:

Պատվիրատու՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտե

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 5

28.04.2017թ. կնքված N ՀՀՔՊԿ-ՊԸԾՁԲ-17/3 գնման պայմանագրի

ք. Երևան 05 .10.2020թ.

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Ա. Մկրտչյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և <<Արման-Թաման>> ՍՊԸ -ն (այսուհետ՝ Կատարող)՝ ի դեմս ընկերության տնօրեն Մ. Մովսիսյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից՝ երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր) հիմք ընդունելով ՀՀ կառավարության 24.09.2020թ. N 1589-Ն որոշումը և ՀՀ Լոռու մարզի ք. Վանաձորի գյուղատնտեսական պետական քոլեջի մարզադահլիճի վերակառուցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցման համար Կողմերի միջև 28.04.2017թ. կնքված N ՀՀՔՊԿ-ՊԸԾՁԲ-17/3 գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.3 կետը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Ուժը կորցրած ճանաչել Պայմանագրի 31.01.2020թ. կնքված N 4 համաձայնագիրը:

2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը կազմված է 1 (մեկ) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ,
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011012599
ՀՎՀՀ 02565827

Գլխավոր քարտուղար՝

_____ Ա. Մկրտչյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ՝
<<Արման-Թաման>> ՍՊԸ
ՀՀ Գեղարքունիքի մարզ, գ. Կարմիրգյուղ
<<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ, Գավառ մ/ճ
Հ/Հ 11500844540100
ՀՎՀՀ 08417115

Տնօրեն՝

_____ Մ. Մովսիսյան
(ստորագրություն)